



«ՓՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓՄԼ.» ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1900

ԹԻՒ 3

ԽԱՉՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Տեսարան եղող անձը ուրուն վրայ այս կիները կը նային, այնպիսի մէկն է ուրուն կեանքը երկիրս ոչ երբեք տեսած էր ոչ ալ նորէն պիտի տեսնէ: Սպանութեան և անգլիական շատ տեսարաններ պատահած են: Ամբողջ քաղաքներ սուրի բերնէ անցուած են, երբ հազարաւոր անզոր կիներ և տղաք պարապ տեղը գլխովին հայցած են բարբարոս յաղթականներուն ձեռքէն: Բայց ահա մարդկային ամբողջ ընտանիքին մէջ միակ անմեղ անձը որ երկիրքէն իջած և մարդկութիւն հագած էր բարիք ընելու համար: Իր հրապարակային կեանքին տարիները ողորմութեան գործեր ընելով և Աստուծոյ ճշմարտութիւնը հրատարակելով անցուցած էր: Աշխարհ երբեք այնքան պարտական եղած չէ ուրիշ բարերարի մը որքան պարտական է անոր: Բայց հոս կը տեսնենք թէ աշխարհ ի՛նչ պէ՛ս վարուեցաւ անոր հետ, ի՛նչ փոխարինեց անոր երախտիքին դէմ: Այնպիսի տեսարան մըն էր այն, որ իբր թէ երկիրքը կարող չեղաւ անոր նայելու, ուստի խաւար եկաւ երկրի վրայ և արևին լոյսը ծածկուեցաւ երեք ժամ:

Ուրիշ տեսակ խաւար մըն ալ կայ որ մարդուս սրտին վրայ կ'իջնայ, այն է՝ անձնասիրութեան և մեղքին խաւարը, որ մարդուս աչքէն կը ծածկէ Յիսուսի սէրն ու ողորմութիւնը: Երբ այս խաւարին մէջէն կը նայինք մեռ-



նող փրկչին վրայ, միայն այն ատեն չենք կրնար սիրել զանիկա և մեր սիրտերը անոր տալ մեզի համար բոլոր ըրածներուն և կրած չարչարանքներուն դէմ: Այդ խաւարը ձեր սիրտերուն վրայ իջած է: Եթէ չէ, Յիսուսի խաչէն լոյս մը կը ճառագայթէ որ ձեր հոգիները կը լեցնէ ուրախութեամբ և խաղաղութեամբ:

ՓՍՅՏ՝ ՓՈԹՈՐԻԿԻ ՄԸ ԺԱՄԱՆԱԿ
Լուրդա Մ. Ալբրիթ հետեւեալ պատ-

մութիւնը կ'ընէ բարեսիրտ հօր մը և մօր մը վրայով.
Ձիւնոտ շաբաթ գիշեր մը երբ մեր փայտը հատնելու մօտ էր, ալքատ տղեկ մը եկաւ և քիչ մը փայտ ուղեց: Ըսաւ թէ իրենց պէպէքը հիւանդ է, և հայրը իր բոլոր վաստակը իրեն կըրուխումի համար կը վատնէ: Մայրս առաջին անգամ խորհեցաւ քիչ մը վասն զի մենք ալ պղտիկ մը ունէինք: Յուրաք շատ սաստիկ էր, և կիրակիէն ետեւ կըրնայինք փայտ գնել: «Մեր ունեցած փայտին կէսը այդ տղին տանք և Նախախնամութեան ապաւինինք. կա՛մ օղը պիտի տաքնայ քիչ մը և կա՛մ փայտ պիտի դայ» ըսաւ հայրս: Մայրս խնդաց, և իր զուարթ կերպով պատասխանեց, «Այո, անոնց պէտքը մերինէն մեծ է, և եթէ մեր փայտին կէսը հատնի, կրնանք անկողին երթալ և պատմութիւններ ընել»: Ուստի մեր փայտին կէսը տուինք աղքատ դրացիին: Իրիկունը, քիչ մը ուշ ատեն, երբ տակաւին մութորիկը սաստիկ էր և լմենք մեր կրակը կը ծածկէինք որպէս զի շուտ չհատնէր, դուռը զարնուեցաւ և երկրագործ մը, որ սովորաբար փայտ կը բերէր մեզի, երևցաւ և ըսաւ, «Ես Պոսթընի համար ճամբայ ելայ, բայց օղը ա՛յնպէս խիստ է որ, կ'ուզեմ տուն դառնալ: Կ'ուզե՞ք որ փայտս հոս պարպեմ: Հոգ չէ, ստակը ետքը տուէք»: «Այո», ըսաւ հայրս. և երբ մարդը գնաց, մօրս դարձաւ և ըսաւ, «Ես

չըսի՞ թէ վայտ պիտի գայ եթէ օգը չտաքնայ: Մայրս շատ անգամ կ'ըսէր, «Յուսա և գործէ»: Նաև իր խօսքերէն մէկն ալ սա էր, «Բու հացդ ջուրերուն վրայ ձգէ, և շատ օրեր ետքը նորէն քեզի պիտի գայ վրան կարագ քուսած»:

ԿՈՅՐ ՏՂԱՔ ԻՆՉՊԵՆ ԿԸ ԽԱՂԱՆ

Լոնտոնի հիւսիսային մասին մէջ Զուիցերական Հիւղակ կոչուած տեղը շքեղ շէնք մը կայ որ կոչուելու Կոյրոց կը կոչուի: Լոնտոնցի կոյր շատ տղաքներ և աղջիկներ այս դպրոցը կը դրկուին կարգալ, գրել սորվելու համար, նաև այն տեսակ գործեր սորվելու համար որ երբ մեծնան՝ կարող ըլլան իրենց ապրուստը ճարել: Կոյրերու այս դպրոցն այցելելը շահեկան է և մեծ զարմանք կը շարժէ, երբ այս յօդուածը գրողը իր բարեկամ լուսանկարիչին հետ հոն գնաց, խաղի ընդարձակ գետին մը ցուցուեցաւ իրենց: Հոն խուսք մը աղջիկներ կը խաղային մէկտեղ, և առաջին անգամ անկարելի եղաւ հաւատալ թէ կոյր էին: Անոնց մեծ մասը բարձրաձայն աղաղակներ կը հանէին իրենց խաղացած ժամանակը, ճիշդ տեսնող ուրիշ մանուկներու պէս: Երբեք իրարու չէին զարնուեր իրենց վազվուտած միջոցին, ոչ ալ անկրկններու կը դպչէին որ վարէին, այնպէս կ'երևնար թէ կը տեսնէին իրենց գացած տեղերը: Անոնցմէ ոմանք չուան կը ցատկէին խնդալով ու աղաղակելով ուրախ և զուարթ: Երկու աղջիկներ չուանը կը դարձնէին կամաց կամաց և միօրինակ, մինչև որ ուրիշ աղջիկ մը մէջը կը վազէր և կը սկսէր ցատկել: Չուանը հետզհետէ աւելի արագ կը դարձուէր, և վերջապէս այն աստիճան արագ՝ որ ցատկող աղջկան շուկը կը բռնուէր: Եւ սակայն այս աղջիկները կոյր էին: Ինչպէս կ'ըլլար որ անոնք ճիշդ յարմար ժամանակին կը վազէին չուանին մէջ, և չէին բռնուեր անկէ կամ չէին արգիլել անոր

դառնալը: Ասիկա գաղտնիք մըն է այն պզտիկներուն համար որոնք կրնան տեսնել իրենց չուան ցատկած ժամանակը:

ԾԵՐՈՒՆԻ ՆԱԽԱՍԻՆԵՐ

Նաւաստիները գրեթէ միշտ պատմութիւններ ընել կը սիրեն: Իրենց պաշտօնին բերմամբ երկրիս դանազան կողմերը կ'երթան և կը տեսնեն շատ



ներուն պատմածները: Եւ ուստի երբ իրողութիւնները բաւական խոշոր, բաւական հիանալի չեն, նոր բաներ, անստոյգ բաներ, կը ստեղծեն և կը պատմեն իբրև իրողութիւններ: Եւ երբ ծերունի նաւաստիներ իրար կուգան, այն ատեն ժամանակ է մտիկ ընելու: Անոնց ամէն մէկը աւելի սուս կալի փոթորիկներէ անցեր է, և աւելի ահաւոր արկածներ կրեր է, աւելի խոշոր ձուկեր բռներ է, և բոլոր միւսներէն աւելի տեսեր է աւելի խոշոր սառնակոյտներ: Ամբրիկա և Անգղիա մասնաւոր տուններ կան ծեր նաւաստիներու համար որոնք ընտանիք չունին: Այդ տուներուն մէջ նաւաստիները իրենց վերջին օրերը միթարութեամբ կ'անցնեն: Նաւաստիներու յատուկ տուն մը կայ Սթէթլըն կղզիին մէջ՝ Նիւ Եորքի մօտ, ուր շատ մը ծերունի նաւաստիներ կը բնակին, և որուն ա՛յնպէս առատաձեռնութեամբ գումարներ յատկացուած են որ նաւաստիները ամէն հանգիստ և միթարութիւն կը վայելեն: Եւ սակայն յատկացուած գումարներուն ամբողջ շահը չձախսուիր: Յիշեալ տունը Ապահով Նաւահանդիստ կը կոչուի: Այսպէս է այն տեղը այն ծերունիներուն համար որ իրենց կեանքը Ովկիանոսի շատ մը փոթորիկներու մէջ անցուցած են: Երանի՜ թէ անոնք ամէնն ալ երկինքի նաւահանգիստը հասնէին վերջապէս:

ՊԱՐՏԻՉՊԱՆ ԹՈՉՈՒՆԸ

Նոր կուխնէայի մէջ թըռչուն մը կայ որ ոչ միայն տուն կը շինէ, հապա պարտէզ մըն ալ կը պատրաստէ: Եւ Պարտիզպան թռչուն կը կոչուի: Պարտիզպան թռչունը երբ տուն մը պիտի շինէ, կը փնտռէ տափակ գետին մը որուն մէջտեղը թուփ մը գանուի: Այնուհետև այս թուփին արմատին բողբոխքը կը ծածկէ մամուռով (ետուն): Թէ ինչո՞ւ այսպէս կ'ընէ, չեմ գիտեր: Անտարակոյս կը կարծէ թէ գեղեցիկ կ'երևնայ անի-


և տարօրինակ բաներ, և կը սիրեն զանոնք պատմել տունէն դուրս չելլող բարեկամներուն, անոնք զարմացնելու և հիացնելու համար: Անոնց մէջ շատեր անտարակոյս արժանի են համբաւին որ ընդհանրապէս կը վայելեն թէ իրենց երևակայութիւնը լաւ կը գործածեն իրենց պատմութիւնները ըրած ժամանակը: Անոնք կը սիրեն պատմել զարմանալի բան մը, բան մը՝ որ գերազանցէ իրենց ընկեր-

կա: Յետոյ երկար ճիւղեր կը բերէ ուրիշ բոյսերէ: Ասոնք գետինը կը տնկէ պատի ձևով և մէկ կողմը բաց կը թողու դուռի տեղ: Ճիւղերը կը բուսնին, այնպէս որ անոր պղտիկ տնակը զարդասենեակի նման կ'ըլլայ: Ամենէն ետքը այս ճաշակի տէր թրուշուր մամուռէ սիրուն ծաղկաստան մը կը շինէ: Զգուշութիւնով կը ժողվէ կը վերցնէ ամէն մէկ քարի կտոր և յարգի շիւղ: Այնուհետև այս ծաղկաստանին վրայ կը ցանէ ծիրանեգոյն հատապտուղներ և կարմիր ծաղիկներ: Երբ ծաղիկները թուփն, անմիջապէս նորեր կը բերէ: Փոքրիկ տնակը երբեմն երեք ոտք լայնութիւն կ'ունենայ և լայնութեանը կէսին չափ բարձրութիւն: Անոր մէջ շատ մը սենեակներ կան, երկու երեք ընտանիքի համար՝ եթէ պէտք ըլլայ: Պարտէզը տունէն մեծ է, նոր կուխնայի բնակիչները անշափ հոգ կը տանին այս թուշուրին, որ երբեք չեն աւերեր անոր փոքրիկ բնակարանը կամ դպիր անոր: Թերևս կ'ուզէք գիտնալ թէ այս թուշուր պարտիզպանն ինչպէս կը հագուի: Համեստ գոյներով կը հագուի: Գլխուն դադաթը, կունակը, թևերը և պոչը մութ ձիթագոյն (զէյթինի) են, և ներքևի կողմը կանաչի գարնող կարմիր: Պարտիզպան թուշուր տորդիկի (արտըճ գուշու), կամ սարեակի (գարա թափուգ) մը չափ մեծութիւն ունի:

(կարթ ունեցող) ձուկն է: Սոսկայի արարած մը ահագին զլխով և բերնով: Կամայ կը լողայ, և շատ անգամ իր որսը նենդութիւնով ձեռք կը բերէ: Կը թաղուի ծովուն յատակը տիւրմին մէջ և կը շարժէ իր մտտ յաւելուածները որ հպելի կը կոչուին և կարթի վրայ անցուած խայծի (տէմ) տեղ կը ծառայեն: Պատր շուրին մէջ մանր ձուկերը այս հպելիները կերակուր կը կարծեն, և երբ կը մտնենան կարթնաւոր ձուկը կը ցատկէ և կը



բունէ դանոնք: Միւս ձուկը Լամբարաձուկն (լամբար ունեցող ձուկ) կը կոչուի: Երբուն մակերեսէն շատ վարկը լողայ, ուր արևին լոյսը չհասնիր, բայց իր լապտերը կը տանի իրեն հետ, իր լոյսը ինք կ'արձակէ, կայծուիկի (աթէջ պէօճէյի) պէս, և բուն իր լոյսով որսին վրայ կ'երթայ:




ԿԱՐԾ ԶԱՄԲԱՅ
Մեր հին դպրոցին ճիշդ ետևը, կ'ըսէ բարեկամ մը, դաշտ մը կար ուր քանի մը խոշոր խնձորենիներ կը գտնուէին: Դպրոց գացող ամէն տղայ քարեր և փայտի կտորներ կը ժողվէր և այդ ծառերուն կը նետէր: Այսպէս հարիւրաւոր խնձորենի ձեռք կը բերուէին: Բայց կար ծառ մը որուն ճիւղերը սաստիկ խիտ էին: Ոչ քար ոչ փայտ կ'ընար հասնիլ անոր խոշոր կարմիր խնձորենիուն, որոնք կարծես թէ կը ծաղրէին զերեք վար ձգելու ամէն աշխատութիւն: Օր մը մինչ նստած էինք դպրոցին մէջ մեր գրասեղաններուն առջևը, հովը սկսաւ սաստկանալ: Ամէն տղի խորհուրդ այդ խնձորենիին գնաց, և ամէնն ալ պատրաստ էին դռնէն

դուրս նետուիլ և վազել ժողվելու համար ծառէն թափուած խնձորենի: Ես վարպետութիւն մը խորհեցայ, կարճ ճամբայ մը՝ խնձորենիին հասնելու: Հաղիւ ցերեկուան արձակուրդը ծանուցուեցաւ և վարժապետին կունակը կողմն դարձաւ, փոխանակ միւս տղոց պէս դռնէն դուրս նետուելու, ետևի պատուհանէն վար ցատկեցի և մացառներուն մէջէն վազեցի դէպ ի խնձորի ծառը: Մինչ արագ կը վազէի, փուշ մը բունեց գլխարկս և վար ձգեց: Երբ գետնէն գլխարկս առնելու կ'աշխատէի, բան մը զարնուեցաւ դաստակիս (պիլէք): Յետոյ անմիջապէս երկու երեք հարուածներ զգացի պարանոցիս և ձեռքերուս վրայ: Իսկոյն հասկցայ թէ գլխարկս մեղուներու բոյնի մը մէջ ինկած էր, և կատարի միջատները վրաս դիզուեցան հարիւրներով: Ամենէն քիչ քսան տեղերէ խայթուելէս ետքը ճահիճը (պալլըզ) վազեցի և երեսուս բազուկներս տիղմով շաղախեցի: Այնուհետև պատահեցայ տղոցը որոնք իրենց գրպանները խնձորներով լեցուցած էին: Երբեք պիտի չմոռնամ անոնց զիս տեսած ժամանակ հանած աղաղակը: Բնաւ չըսի թէ ինչ էր այս վիճակին մէջ գտնուելուս պատճառը, բայց Աստուած այդ ձախորդութիւնը կեանքիս ամենէն օգտակար դասերէն մին ըրաւ: Դատ տղաք և երիտասարդներ պատիւի ու հարստութեան և մինչև անգամ երկինք հասնելու կարճ ճամբայ մը կը փնտրուեն: Կեանքին աշխատութիւններուն շատը կու տան իրենց ընկերներէն աւելի խելք բանեցնելու և զանոնք խաբելու: Եւ մինչև անգամ Աստուծմէ աւելի խելացի ըլլալու ջանացողներ կը գտնուին: Բայց եթէ պատանի մը, երիտասարդ մը կանգ առնէ և մտածէ, պիտի տեսնէ որ այսպիսի ամէն մէկ ճամբու մէջ մեղուի բոյներ, փուշեր ու տատախներ կան: Եւ եթէ խնաստուն է, պիտի զգուշանայ կարճ ճամբաներէ, և գործի ու կրօնքի մէջ ուղղութեան և ճշմարտութեան հին ճամբաները պիտի ընտրէ:

ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ ՁՈՒԿԵՐ
Որչափ կենդանիներ կը սպաննուին ուրիշ կենդանիներու կերակուր ըլլալու համար: Յաճաքին վրայ կան միս ուտող կենդանիներ որոնց միակ կերակուրն է ուրիշ կենդանիներու միսը: Բարեբաղդաբար ամենէն մեծ չորքոտանիները խոտ ուտող են: Եթէ փեղերը, գոմէշները և ուղտերը միս ուտող ըլլային, ո՞րչափ ուրիշ կենդանիներ պիտի սպաննուէին անոնց կերակուր ըլլալու համար: Գիշատիչ, այսինքն սպաննող, թռչուններ կան օդին մէջ և գիշատիչ ձուկեր կան ծովերուն մէջ: Խոշոր ձուկերը կ'ուտեն մանր ձուկերը: Եթէ գիտնալինք այն կեանքերուն թիւը որ մէկ օրուան մէջ կը զոհուին ՈՎԿԻԱՆՈՒՄԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ կերակրելու համար, պիտի ապշէինք անոնց բազմութեանը վրայ: Ահա հոս այս ողբացող ձուկերէն երկու հատ կան: Առաջինը կարթնաւոր

ՕՁԱԿԵՐ ԹՈՉՈՒՆ ՄԸ
Թուշուրները մեծ խելք և վարպետութիւն կը ցուցնեն որտորդութեան, յարձակման և իրենք զիրենք զնասուէլէ պաշտպանելու մէջ երբ կը կուռնին:

Նօտարահաւ ըսուած թուշուներ օձին անխոնջ հալածիչը և անհաշտ թշնամին է: Ամէն տեսակ օձերը, մինչև անգամ ամենէն թունաւորները կը բռնէ այն պիտի կերպով մը՝ որ թէ՛ հետաքրքրութեամբ է, թէ՛ զուարճալի: Օձը կը փախչի իր թշնամիէն, որ իր ետեւէն կ'իջնայ և պատահութիւն կը փնտռէ հարուած մը տալու: Երբ օձը թուշուին կողմը կը դառնայ, թուշունը իր թևերէն մէկը իրբն վահան կը գործածէ և կը զարնէ իր ոտքով: Օձը իր ակուանները թուշունին թևին մէջ կը խոթէ, բայց թոյնը փետուրներուն միայն կը հասնի, և թուշունը կ'ազատուի առանց վնասուելու: Թուշունին զօրաւոր ճանկերուն կրկին և կրկին տուած հարուածները կը չփոթեցնեն և կը տկարացնեն օձը, որ վերջապէս կ'իջնայ: Այն ատեն թուշունը իր սուր կտուցով արագ արագ կը ծակծկէ անոր գլուխը: Այնուհետև թուշունը օդը կը նետէ իր որսը և անոր վար ինկած միջոցին բերնովը կը բռնէ զանիկա և կը կլլէ:




ՄԱՆՈՒԿ ԲՆԱՍԹՈՅԸ

Վարժուհի մը գիւղական դպրոցի մը մէջ պաշտօն կը վարէր իր այդ գործին սկսած ժամանակները: Անոր աշակերտներուն մէջ իբր տասնըօրս տարեկուս տղայ մը կար որ ուսմանը սորվելու գրեթէ չունէր փափաք, և այնպէս կ'երևնար թէ բոլորովին անհոգ էր դպրոցին վերաբերեալ ունէ բանի: Ամէն օր անյաջող էր իր դասերուն մէջ, և երբեք վրան ազդեցութիւն չէին ըներ դպրոցական պատիժները և վարժուհիին կողմէն անոր որբւարի մօր զրկուած տեղեկութիւնները անոր ծուլութեան և անյաջողութեան մասին: Օր մը վարժուհին քերականութեան դասին վերաբերեալ հարցում մը ըրաւ անոր, բայց ուղիղ պատասխան մը չկրցաւ առնել իր բոլոր ջանքերուն հակառակ, ուստի զանիկա ետ, տեղը զրկեց: Վարժուհին քիչ մը բարկացած էր և տղան կը գիտէր անոր իր նստարանն երթալէն ետքը: Տղան գնաց նստաւ, գիրքը սրանհղովեամբ մէկ կողմ հրեց, և ճանճ մը տեսնելով բռնեց զայն ձեռքը ճարտարութեամբ շարժելով, յետոյ կեցաւ և սկսաւ մեծ ուշադրութեամբ զննել միջատը: Տասնըօրէին վայրկեանի չափ զբաղեցաւ այսպէս, առանց բոլորափքը նայելու, և տղին դէմքին երևոյթէն իմացաւ վարժուհին թէ լրկ հետաքրքրութիւն

նը չէր որ անոր միտքը զբաւած էր: Վարժուհիին միտքը բան մը ինկաւ, զոր գործնականի վերածեց այդ օրը առաջին պատահութիւնով: «Տղա՛ք,» ըսաւ, «ինչ կրնաք բսել ճանճերու վրայով?» Եւ քանի մը արթուն մտքով տղաքներ անուններովը կանչելով հարցուց թէ կրնային իրեն բան մը բսել ճանճերու կազմութեան և անոնց ունակութիւններուն վրայով: Տղաքը շատ քիչ բան կրցան բսել միջատին վրայով: Շատ անգամ բռնած էին ճանճեր, բայց լոկ զբոսանքի համար, և մտածած չէին թէ կ'արժէր ուսումնասիրել այս պիտի հասարակ միջատ մը: Ամենէն ետքը հարցուց այն ապուշ տղին, որ լուրջեամբ, բայց փայլուն աչքերով, մտիկ կ'ընէր միւս աշակերտներուն ըսածները: Այնպիսի ճոխ և վառվռուն նկարագրութիւն մը ըրաւ փոքրիկ կենդանիին գլխուն, աչքերուն, թևերուն և ոտքերուն վրայ, որ վարժուհին սքանչացաւ և ամբողջ դպրոցը հիացաւ մնաց: Տղան ըսաւ թէ ճանճը ինչպէս կը քալէ, ինչպէս կ'ուտէ. ըսաւ նաև շատ բաներ որ բոլորովին նոր էին վարժուհիին համար, այնպէս որ երբ տղան ընցուց խօսքը, վարժուհին ըսաւ, «Շնորհակալ ենք: Դուն մեզի ընտիր դասախօսութիւն մը ըրիր բնապատմութեան վրայ, և դուն ինքիրմէդ սորվելոց ատենք բոլորը:»


Այդ օր իրիկուան դէմ դպրոցին արձակումէն ետքը վարժուհին երկար խօսակցութիւն մը ունեցաւ տղին հետ, և հասկցաւ թէ անիկա կը սիրէ անտառներն ու մարդագետիմներն երթալ, միջատներ հաւաքել և թուշուններ զննել, բայց թէ իր մայրը ժամանակի կորուստ կը սեպէ այդ բաները: Բայց վարժուհին իմաստութեամբ քաջալերեց տղան որ շարունակէ այս ընթացքը, և ըսաւ որ դպրոց բերէ բզէզներ, թիթեռնիկներ և թըրթուրներ և պատմէ ինչ որ գիտէ առանց վրայով: Տղան շատ ուրախացաւ բաներուն այսպէս անակնկալ կերպով փոխուելուն վրայ, և քանի մը օրէն այդ անհոգ ապուշը դպրոցին նշանաւոր աշակերտն եղաւ: Բնապատմական գիրքեր առնուեցան անոր համար, և զարմանալիքներու աշխարհ մը պարզուեցաւ անոր սրտես աչքերուն առջև: Կարդաց, ուսումնասիրեց և քննեց: Համոզուեցաւ թէ անհրաժեշտ է սորվիլ բաներ Մաթեմատիքի, Աշխարհագրութեան և Քերականութեան վրայ, որպէս զի յաջողութեամբ յառաջ տանէր իր սիրական ուսումը, և արագ յառաջդիմութիւն ըրաւ իր

դասերուն մէջ: Համառօտիւ, քսան տարի ետքը երևելի եղաւ իրբն բնախոյզ, և երբեք չէր քաշուեր խոստովանելէ թէ իր յաջողութիւնը այն իմաստուն վարժուհիին կը պարտէր:



ՄԱՅՐ ՓՈՒԿ ԵՒ ՁԱԳԸ

Շատ չըներ, Քալիֆորնիոյ մօտ օր մը նաւավար մը փոկի ձագ մը բռնեց և նաւին մէջ առաւ անվնաս: Երբ նաւը ճամբայ ելաւ, ձագին մայրը երևցաւ, որ նաւին բոլորափքը եկաւ և խեղճուկ աղաղակներ կը հանէր, և ձագը նաւին մէջէն կը հաչէր և կուլար անոր պատասխանելով: Երբ նաւը Սանթա Պարպարա հասաւ, փոկին ձագը տախտակամածին վրայ դրուեցաւ անհոգութեամբ: Մայրը ութսուն մորնի չափ տեղ լողալով եկած էր, և սկսաւ ձայներ հանել: Չագը իբր թէ պատասխանելով անոր, նաւին ելլը սահեցաւ և ծովը գլորեցաւ: Մօրը սուր ակուանները շուտով պատռեցին տուրակը որուն մէջ բանտարկուած էր ձագը, որ ակնթարթի մը մէջ ազատուեցաւ:



ՄԵՐ ՓՈՒՔՐԻԿ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Մեր թղթակիցը, որ այս թերթին համար օգտակար և սիրուն հանելուկներ կը գրէ, տեսնելով որ նա խորդ հանելուկը լուծել դժուար եկած էր մեր փոքրիկ ընթերցողներուն, այս անգամ հետեւեալը զրկած է զոր կը յուսանք թէ դիւրին պիտի ըլլայ լուծել:

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՆ

* *
* 0 *
* 0 0 *
* 0 * 0 *
* * 0 0 0 *
* 0 0 0 0 0

1. Միջարկութիւն մը: 2. Զարմանալի թիւ մը (աջէն ձախ): 3. Իր անձին, ընտանեաց և ժողովրդին անէջ եղող մարդ մը: 4. Բարեկալտ կին մը: 5. Խորայնի մէկ նախահայրը: 6. Գաւթի մէկ կենը:

Նշանակեալ անունները տրուած օրինակին նման երբ տակէ տակ զննու, սկզբնատառերը վերէն ի վար պիտի կարգաւ առաքեց ժամանակակից քահանայագետի մը անունը: Տայրերուն գիւրբը վերէն ի վար զեղեցիկ ծաղիկ մը: Իսկ միջին աստղերուն տեղը դրուած տառերը վարէն վեր՝ Յակոբայ որդւոց մէկուն անունը:

Կ. պոլլիս 804,054 ՀՕԵԿՁԵ

Տարեկան բաժանորդագրութիւնը 10 րոպէս արժանաթիւ կանխիկ, ամէն տեղաւ չափով:

Ամերիկայի Միտիոնարայ Արտօնատէր շէնօրէն—Խմբագիր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԼ Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՄԱՆՅԱՆԻ ԶԻՆՃԱՆՅՐԸՄ ԵՊՈՒՆՈՒՄ